

17.510

SP

Պատկերակա բոլոր յերկրները, Կապով



L. Քերթա

**ՓՈԹԻԱՑՆԵԼ, ՀՈՂՄԱՅՐԻՎ ԱՆԵԼ
ՍՈՑԻԱԼԻԶՄԻ
ԹԵՆԱՄԻՆԵՐԻՆ**

323.2

բ-55

ՀԱՅԿԱՌԻՍԿՐԱՑ • 1936

26 SEP 2006

323.2

Պրոլետարներ բոլոր յերկրներին, սիւսցե՛ք

F-55


JAN 2016

Լ. ԲԵՐԻԱ

ՓՈՇԻԱՑՆԵԼ,
ՀՈՂՄԱՑՐԻՎ ԱՆԵԼ
ՍՈՑԻԱԼԻԶՄԻ
ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ

1010 4017
40268

10-095
233



ՈՒՍՀՐԱՏ


1986

ՇԵՐԵՎԱՆ

10 MAR 2013

Л. БЕРИЯ
РАЗВЕЯТЬ ВПРАХ ВРАГОВ
СОЦИАЛИЗМА

Армпартиздат, Ереван, 1936 г.



3279-91

Պատ. խմբ. նոց. Մակինց,
բարգմանիչ՝ Հ. Թուրքյան,
կոմեր. սրբ.՝ Լ. Արովյան,
սրբագր.՝ Ա. Տ.-Մկրտչյան

Հրատ. № 390, պատվ. № 265, Դրավ. լիազ. № 2100

ինքնքս П-84, տիրած 20.000

Հանձնված է արտադրության 26/VIII 1936 թ.

Ստորագրված է տպագր. 28/VIII 1936 թ.

Հայկուստեռաթի տպարան, Յեքեվան, Ալլահվերդյան

17510

«...վաչքե որորել կուսակցությանը, այլ մրա մեջ
զգաստություն զարգացել, վո՛չքե քնալանի մրան,
այլ պակել մարտական պատրաստության վիճակում,
վո՛չքե զինաթափել, այլ ուղառազինել, վո՛չքե դեմո-
քիիզացիայի յենթարկի, այլ պակել մրան մարիիզա-
ցիայի վիճակում...»:

(Ի. ՍՍՍՀԽՍ. — Համկ(բ) 4 17-րդ համագումարում
տված զեկուցումից):

I

Մեր խորհրդային հզոր յերկիրը հաստատ քայլերով
առաջ է շարժվում դեպի յերջանիկ և ուրախ կյանքի
բարձունքները:

ԽՍՀՄ-ի ստալինյան Սահմանադրության նախագի-
ծը, վոր մեծագույն խանդավառությամբ քննարկում
են մեր յերկրի աշխատավորները, մարմնացնում է սո-
ցիալիզմի այն պատմական հաջողությունները, վոր
ձեռք են բերել Խորհրդային Միության ժողովուրդ-
ները բուլճարիկյան կուսակցության ղեկավարությամբ,
կուսակցության և աշխատավոր մասսաների սիրելի ա-
ռաջնորդ մեծ Ստալինի հանճարեղ առաջնորդությամբ:

Ամբողջ աշխարհը գիտե այդ հաջողությունների
մասին: Այդ հաջողությունները գիտեն և զնահատում
են աշխատավոր մարդկության միլիոնները: Նույնիսկ

սոցիալիզմի ամենաչարագույն թշնամիներն ել հարկադրված են ընդունել խորհրդային իշխանության հաջողությունները:

Այդ հաջողությունները ձեռք են բերված ԽՍՀՄ-ի բոլեխիկների և աշխատավոր մասսաների կողմից հահահեղափոխության ուժերը լիկվիդացրալի յենթարկելու հետևանքով, հակակուսակցական խմբավորումները և ոպողիցիաներն անողոքաբար ջախջախելու հետևանքով: Այդ հաջողությունները ձեռք են բերված մեր յերկրի աշխատավոր մասսաների հերոսական պայքարի ու կատարած աշխատանքի շնորհիվ և մեր կուսակցության գծի հաղթանակի, մեր վուսակցության ստալինյան ղեկավարության հաղթանակների արտահայտությունն են հանդիսանում:

Միայն Լենինի-Ստալինի կուսակցությունն է, վոր պրոլետարիատի ղեկատարութայի առաջավոր ուժը հանդիսանալով, ղեկավար ունենալով ՀամԿ(բ)Կ ստալինյան Կենտրոնական Կոմիտեն, անհաշտորեն պաշտպանելով իր գլխավոր գիծը թշնամիների հարձակումներից, ապահովեց այդ հաջողությունները:

Այդ պատճառով է ահա, վոր սոցիալիզմի ջախջախված թշնամիների վողորմելի բեկորներն այժմ յիորձում են իրենց բոլոր հարվածներն ամենից առաջ ուղղել Լենինի-Ստալինի կուսակցության դեմ, նրա ղեկավարության դեմ, նրա սրտին, — իրենց սև, դավաճանական և քայքայիչ աշխատանքում բռնելով ամենանողկալի, ամենաստոր միջոցների և մեթոդների ճանապարհը:

«Պետք է նկատի ունենալ, — պսուձ եր ընկեր

Ստալինը, — վոր խորհրդային պետության զորության աճումն ուժեղացնելու յե մեռնող դասակարգերի վերջին մնացորդների դիմադրությունը: Հենց այն պատճառով, վոր նրանք մեռնում և իրենց վերջին որերն են ապրում, նրանք հարձակման մի ձևից անցնելու յեն այլ ձևերի, հարձակման ավելի սուբ ձևերի, դիմելով բնակչության հետամնաց յապիւրին և նրանց մորբիլիդացիայի յենթարկելով խորհրդային իշխանության դեմ: Չկա այնպիսի մի ստորություն և զրպարտություն, վոր այդ նախկին մարդիկ չբարդեյին խորհրդային իշխանության, վրա և վորոնց շուրջը չփորձեյին մորբիլիդացիայի յենթարկել հետամնաց տարբերին: Այդ հողի վրա կարող են վերակենդանանալ ու շարժվել հակահեղափոխական հին կուսակցությունների՝ եսերների, մենշևիկների, կենտրոնի ու ծայրերիկրների բուրժուական նացիոնալիստների ջախջախված խմբերը, կարող են վերակենդանանալ ու առաջ շարժվել հակահեղափոխական ոպողիցիոն տարբերի բեկորները տրոցկիստների և աջ ուլիոնիստների խմբից»:

Ընկեր Ստալինի այս հանճարեղ նախիմացությունը լիովին և ամբողջապես հաստատվեց իրական կյանքով:

Տրոցկու, Ջինովյեվի, Կամենևի — այդ հակահեղափոխականների և սրիկանների ձեռքով կադակելով ված այն ստոր սպանությունը, վորին զոհ գնաց կուսակցության լավագույն և սիրելի առաջնորդներից մեկը՝ Սերգեյ Միրոնովիչ Կիրովը, — ականուկ կեր-

պով ցույց տվեց, վոր կուսակցութեան թշնամիները՝
գնալով տեղորի, դիվերսիայի և լրտեսութեան ճա-
նապարհով՝ իրենց այդ պայքարում չեն խորշում
այլևս վոչ մի միջոցից:

Թշնամիների համար սլարդ է, վոր կուսակցութեան
դեկավաթութեամբ, ընկեր Ստալինի առաջնորդու-
թեամբ խորհրդային իշխանութեանն ամրացել ու հա-
ջողութեամբ հաղթահարել է իր առջև ծառացած բոլոր
դժվարութեանները և ձեռք է բերում նորանոր հաղթա-
նակներ, վոր բուլղարիայի կուսակցութեանը դարձել է
ավելի միասնական և միաձուլ, քան յերբեք:

Այս տեսնելով, հակահեղափոխական ուժերի մնա-
ցորդները և, ամենից առաջ, հակահեղափոխութեան
կապովի շները—նողկալի տրոցկիստներն ու ղինովյե-
վակամները — մասսաների մեջ այլևս վոչ մի հենարան
չունենալով, գաղաղած, հենց պատմութեան կողմից
մերկացված և իրենց «սկզբունքների» հիմք դարձնե-
լով կարյերիզմը, մորթապաշտութեանն ու մարդոյո-
րութեանը, վերածվեցին մարդասպանների մի լան-
դայի, վորոնց միակ նպատակն է, չքարչելով վոչ մի
միջոցից, ինչ գնով ել լինի իշխանութեան հասնել:

Բռնելով դավաճանութեանները և մատնութեաննե-
րի ճանապարհը, տրոցկիստներն ու ղինովյեվակամները
գլորվեցին ամենասանձարձակ սպիտակ-գլարդիա-
կանութեան ճահիճը, վերածվեցին ֆաշիստական հա-
կահետախուլութեան գործակալների, դարձան հակա-
հեղափոխական տարրերի գլխավոր կազմակերպիչ ուժը
յերկրի ներսում և միջազգային հակահեղափոխական

բուրժուազիայի առաջավոր ջոկատը խորհրդային իշ-
խանութեան դեմ նրա մղած պայքարում:

Խորհրդային իշխանութեան դեմ պայքարելը դար-
ձավ նրանց նպատակը. տեղորը, լրտեսութեանը և
դիվերսիան դարձան նրանց պայքարի միջոցները, իսկ
յերկրեքսանիութեանը՝ նրանց հակահեղափոխական
սպիտակ-բանդիտական վոտնագութեանների մեքողմ
ու քողարկումը:

II

Վերջին ժամանակներս, կուսակցական փաստաթղ-
թերի ստուգման և փոխանակման շրջանում, Անդրկով-
կասում հայտնաբերված և մերկացված են հակահեղա-
փոխական տրոցկիստական-ղինովյեվական առանձին
խմբակներ:

Թբիլիսիում (Թիֆլիս) մերկացված են հակահեղա-
փոխական-տրոցկիստներ Թումանովը, Ալիբուտայան,
Զիլլաձեն, Զիգրաշվիլին, Կադարովը, Անանյինը,
Մուլերին, Վարնազովը և ուրիշները: Այդ յերկրեքսա-
նիները, վորոնք անցյալում յեղել են նացիոնալ-ով-
լոնիստներ, իսկ այնուհետև պատկանելիք են յեղել
տրոցկիստական ոպողիցիային, վորոնց մի մասը յե-
ղել է արքորում, իսկ նրանցից վումանք իր ժամանա-
կին վերականգնվել են կուսակցութեան մեջ՝ կուսակ-
ցութեան գծին հավատարիմ լինելու մասին յերդումներ
տալով, միևնույն ժամանակ տրոցկիստական հակա-
հեղափոխական ընդհատակ եյին ստեղծում, քայքա-

յիչ աշխատանք եյին կատարում, տեռորիստական ակտեր եյին նախապատրաստում :

Բազմում մերկացված է Բաղդասարովի, Կրիլովի, Կուզմինի, Կոնեվսկու, Ո. Բալթամովի, Բարայեվի և ուրիշների հակահեղափոխական տրոցկիստական-դի-նովյեմական տեռորիստական խումբը : Ինչպես հաս-տատված է, աջորից Բազու վերադառնալով՝ արոց-կիստները վո'չ միայն չեն դադարեցրել իրենց հակա-հեղափոխական աշխատանքը, այլ ընդհակառակը՝ հաջողեցնելով իրենց վերականգնումը կուսակցու-թյան մեջ՝ միաժամանակ հակահեղափոխական տեռորիստական դիվերսիոն խմբեր են ստեղծել Բաղ-վում, իրենց աշխատանքում կապվելով հանրաժանութ-յերկերեանի հակահեղափոխական Տեր-Վահանյանի հետ :

Յերևանում մերկացված է Ստեփանյանի հակա-հեղափոխական տրոցկիստական - նացիոնալիստական խումբը : Բանից պարզվում է, վոր այդ սրիկան և խաբեբան, դեռ Մոսկվայի Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտում ուսանելու ժամանակ, իսկ վերջին 4-5 տարին Հայաստանում գտնվելիս, նախ՝ իբրև լուսժողով և ապա՝ վորպես Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի դիրեկտոր, այդ ամբողջ ժամանակամիջո-ցում հակահեղափոխական տրոցկիստական-նացիոնա-լիստական աշխատանք է կատարել, ստեղծել է հակա-հեղափոխական խումբ, կուսակցության դեկավարու-թյան և ՈՍՀՄ-ի կառավարության դեմ տեռոր կատա-րելու պրոպագանդ մղելով :

Հակահեղափոխական տրոցկիստական-դինովյեմա-

կան խմբեր են հայտնաբերված նաև Լենինականում, Բաթումիում և Կիրովաբադում :

Հայտնաբերված խմբակների մասնակիցների մեծա-գույն մասը խոստովանեց իր հակահեղափոխական աշ-խատանքը : Նրանք խոստովանեցին, վոր տրոցկիստա-կան-դինովյեմական բլոկի կենտրոնի առաջադրանքի համաձայն ատելություն եյին բորքեքում հակահեղա-փոխական խմբերի մասնակիցների մեջ դեպի Համ. Կ(բ) Կ դեկավարությունը, դաստիարակելով տեռորիստ-ների կադրեր, վնասարարական աշխատանք կատարե-լով արտադրության մեջ, և դիվերսիոն ակտեր եյին նախապատրաստում :

Իրենց աշխատանքի մեջ այդ սրիկաները սերտ կապ եյին հաստատել մենչևիկյան, դաշնակցական, մուսա-վաթական, սպիտակ-գլավորդիական և կուսակային հա-կահեղափոխական տարրերի հետ :

Հակահեղափոխական տրոցկիստ-դինովյեմականներն իրենց պայքարի նպատակների և միջոցների մեջ վո'չ միայն կապվել եյին Անդրկովկասյան հանրապետու-թյուններից վոնդված մենչևիկյան, դաշնակցական, մուսավաթական սպիտակ-գլավորդիականների և նրանց ընդհատակյա գործակալության հետ, այլև Անդրկով-կասի հանրապետություններում նրանց կազմակերպիչ ուժն եյին հանդիսանում, գլխավորում եյին նրանց պայքարը սոցիալիզմի հաղթանակների դեմ :

Կուսակցական կազմակերպություններում գտնվեցին քաղաքական կույրեր, մարդիկ, վորոնք հանցավոր կերպով դանդ եյին առնում ընկեր Ստալինի ցուցում-ները՝ զգաստությունը բարձրացնելու անհրաժեշտու-

Թյան մասին, մարդիկ, վորոնք վորեւ հետեւություն չարին ընկեր Կիրովի սպանությունից, կուսակցական փաստաթղթերի ստուգման և փոխանակման դասերից:

Կուսակցական կազմակերպությունների մեջ գտնվեցին այնպիսի ղեկավարներ, վորոնք իրենց անբավարար զգաստությամբ հնարավորություն եյին ստեղծում տրոցկիստական-դինովյեվական սրիկանների հակահեղափոխական աշխատանքի համար:

Դեռ կուսակցության շարքերից վերջնականապես չեն քշված նաև դասակարգային թշնամիների անմիջական գործակիցները:

Տրոցկիստական-դինովյեվական մերկացված խմբերի կազմում յեղել են կուստոմասավոր և կուսակցական փաստաթղթերի ստուգումն անցած մարդիկ: Բազմի տրոցկիստական-դինովյեվական խմբի կազմակերպիչները—Բաղդասարովը, Կրիլովը, Կոնեվսկին, Բայրամովը և Բաբայեվը—կուսակցության անդամներ եյին:

III

Զգաստությունը կորցնելու և տրոցկիստների, դինովյեվականների ու այլ հակահեղափոխականների հակահեղափոխական աշխատանքին աջակցելու տեսակետից առանձնապես ուսանելի յեն այն փաստերը, վորոնք վերաբերում են Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի նախկին քարտուղար Սանժյանին և Կուսկոլեղիայի Հայաստանի քարտուղար Գալոյանին:

Ինչպես պարզված է՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախկին քարտուղար Սանժյանը՝ դեռ 1934—35 թ.թ. աղբա-

նշաններ ստանալով Ստեփանյանի և նրա խմբի հակահեղափոխական, տեռորիստական և քայքայիչ աշխատանքի մասին, վորեւ միջոց չձեռնարկեց այդ խմբակի մերկացման համար:

Յերբ Հայաստանի Կուսկոլեղիան դեռ 1934 թվին քննության առնելով Ստեփանյանի հակահեղափոխական աշխատանքին վերաբերող նյութերը՝ լիովին ռեպրիլիտացիայի յենթարկեց նրան, թաղցնելով և կոծկելով այդ դործը, Սանժյանը քուլարկեց Կուսկոլեղիայի այդ հանցավոր արարքները, հաստատելով նրա վորոշումը:

Սահվանից առաջ գրած իր վերջին նամակում Սանժյանն ընդունում է՝ «Ստեփանյանի դործը Կուսկոլեղիայում քննելու կապակցությամբ յես թույլ եմ տվել կուսակցական ղեկավարի համար խայտառակ սխալ»:

Ստեփանյանի հակահեղափոխական տեռորիստական խմբի դործի քննությունը, վերջին ժամանակներս հակահեղափոխական, տրոցկիստական և նացիոնալիստական տարրերի մերկացումը Հայաստանում ցույց են տալիս, վոր Սանժյանը վոչ միայն «խայտառակ սխալ» է թույլ տվել Ստեփանյանի խմբի դործում, այլև կորցնելով ամեն մի կոմունիստի և առավել ևս կուսակցական կազմակերպության ղեկավարի համար անհրաժեշտ զգաստությունը, նա հովանավորել է հակահեղափոխական— ազգայնական տրամադրությունները, թույլ է սրայքարել տրոցկիստական, դաշնակցական և այլ հակահեղափոխական տարրերի դեմ և դրանով արդեն նպաստել է նրանց հակախորհրդային աշխատանքին:

Այժմ պարզված է, Վոր Խանժյանը սխառմատիկաբար, տարիներ ընթացքում, նամակադրուժյուն է ունեցել արտասահմանում (Փարիզում) գտնվող Վոմն Չոբանյանի հետ, Վորը հայկական հակահեղափոխական բուրժուա-նացիոնալիստական «Ռամկավար» կուսակցության ամենաակամավոր գործիչներից մեկն է:

Այդ նամակադրուժյունը Խանժյանը թաղցնում էր կուսակցությունից: Խանժյանին դրած իր նամակներում այդ Չոբանյանը հակահեղափոխական ազգայնական «խորհուրդներ» էր տալիս Խանժյանին:

Այդպիսի նամակներից մեկում 1933 թ. Չոբանյանը գրում էր Խանժյանին. «Շատ լավ կանք, յեթե ձեր մամուլի մեջ և ձեր ճառերում ըստ հնարավորության քիչ խոսեք դաշնակների մասին»: 1936 թ. դրած իր նամակում՝ նոր Սահմանադրության կապակցությամբ՝ Չոբանյանը խորհուրդ է տալիս Խանժյանին հարց հարուցանել Հայաստանի սահմանները վերաքննելու և ընդարձակելու մասին:

«Խոսքս,—գրում է նա Խանժյանին,—վո՛չ միայն Տաճկաստանին հանձնված՝ Անիի, Արարատի, Ղարսի և Սուրմալուի մասին է, այլև Ախալքալաքի և Ղարաբաղի... ու Նախիջևանի, Վորը միշտ Հայաստանի մասըն է կազմել»:

Խանժյանը Վոմն Չոբանյանի ստանում էր այդպիսի նամակներ, այլև հանդուրժելի յեր համարում պատասխանելու դրանց և նույնիսկ հետևելու այդ հակահեղափոխական խորհուրդներին:

Այսպես, որինակ, դաշնակներ խմորի կապակցությամբ նա ուղղակի ցուցումներ էր տալիս «Խորհրդա-

յին Հայաստան» թերթի (Հայաստանի Կենտկոմի որդանի) խմբագրությանը՝ մամուլի եջերում հնար յեղածին չափ քիչ քննադատել դաշնակներին և ինքն էլ աշխատում էր «Ըստ հնարավորության» քիչ քննադատել նրանց իր ճառերում:

«Ներկա պայմաններում Վորեկ կարիք չկա հոգվածներ տպագրելու դաշնակների դեմ: Դա ավելորդ բան կլիներ»,—այսպիսի ցուցումներ էր տալիս Խանժյանը «Խորհրդային Հայաստան»-ի աշխատողներին:

Զգաստություն չհայտարարելով տրոցկիստների և դաշնակների դեմ մղվող պայքարում, յերկերեսանիւթյուն անելով կուսակցության հանդեպ, Խանժյանն ուղղակի հովանավորում էր հայ ինտելիգենցիայի մեջ, գրողների մի Վորոչ հատվածում յեղած աջն ազգայնական սանձարձակ տարրերին, Վորոչ բացահայտ պայքար էյին մղում հայ ժողովրդի՝ ձևով աղբային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի կառուցման դեմ, հակադրելով դրան «ձևով աղբային և բովանդակությամբ ազգայնական» կուլտուրայի հակահեղափոխական Փորմուլը:

Կուսկոնդիայի Հայաստանի նախկին քարտուղար Գալոյանը, այդ սրիկան և յերկերեսանին, հակահեղափոխականների, տրոցկիստ-դիմոկրատականների անմիջական գործակիցը դուրս յեկավ:

Նա թաղցրել էր կուսակցությունից 1927 թվին իր՝ տրոցկիզմին պատկանելը, անմիջական հովանավորություն էր ցույց տալիս տրոցկիստներին և աջակցում էր Ստեփանյանի հակահեղափոխական, տեուրիստական խմբին: Քանիցս հայտարարություններ ստանալով կու-

սակցության առանձին անդամներից Ստեփանյանի հակահեղափոխական, տեռորիստական և ազդայնական արտահայտությունների մասին, Գալոյանը վո՛չ միայն վորևե միջոց չձեռնարկեց Ստեփանյանի խումբը մերկացնելու՝ ուղղությամբ, այլև, ընդհակառակը, կուսակցական տույժի յենթարկեց կուսակցության այն անդամին, վորը մերկացնում եր Ստեփանյանին:

Գալոյանը հյուրասիրաբար ընդունում եր իր բնակարանում հակահեղափոխական Ստեփանյանին և անձամբ ունկնդրում նրա հակահեղափոխական, դաժնակցական «դատողությունները»:

Հայաստանի կոմկուսակցության շրջկոմների և քաղկոմների կողմից մերկացված հակահեղափոխական տրոցկիստներին Գալոյանը վերականգնում եր կուսակցության շարքերում. Գալոյանը քողարկում եր նրանց, իսկ Կուսկոլեգիայի մյուս անդամները բարեհոգությամբ ականջներն եյին թափահարում և կնքում եյին Գալոյանի հրամցրած վորոշումները:

IV

Բազմի Բալախանիի, Լենինյան և Շահումյան ուսյունների առանձին կուսկազմակերպություններ իր ժամանակին մի շարք ազդանշաններ են ստացել առանձին կոմունիստներից և անկուսակցական ստախանովական բանվորներից տրոցկիստների, զինովյեմականների հակահեղափոխական գործունեյության մասին, սակայն ժամանակին միջոցներ չեն ձեռնարկել նրանց մերկացնելու համար:

Բալախանիի ուսյունի Բուդյոննու անվան գործարանում Համկ(բ)Կ համակրող Միտյուշինը կուսկազմակերպությանը հաղորդել եր այն մասին, վոր կուսակցության անդամ յերկերեսանի Սորոկինը և կուսակցությունից վտարված տրոցկիստներ Դենիսովը, Մոկչինովը և Ջերնիշևին զբաղված են կուսակցության դեմ հակահեղափոխական զրպարտությամբ և հակահեղափոխական գրույցներ են ունենում բանվորների հեա:

Բուդյոննու անվան գործարանի կուսկոմում վո՛չ միայն վորևե ուշադրություն չդարձրին Միտյուշինի այս հայտարարությանը, այլև ընդհակառակը՝ բարենպաստ պայմաններ եյին ստեղծում թշնամիների հակահեղափոխական աշխատանքի համար:

Հակահեղափոխական տրոցկիստական տեռորիստական խմբի աւերիվ անդամներ Լեվադինին, Ապրակովին և Պակինին աշխատանք տրվեց կուսկարինետում:

Ջգաստության բթացում, եր ցուցաբերել նաև Լենինյան ուսյունի նախարհանքերի ճանապարհային վարչության կուսկազմակերպությունը (ՆձՎ—Ջաբրատ): Կուսակցության անդամ, գլխավոր կոնդուկտոր Շուքիկոն հաղորդել եր կուսակցական կազմակերպությանն այն հաւախորհրդային, հակահեղափոխական, տրոցկիստական աղիտացիայի մասին, վոր Ջաբրատ կայաւանում ծավալում եր կուսակցությունից վտարված Սերգեյովը: Վադոնային դեպոյի կուսկազմակերպիչ Կարապետյանը հաղորդել եր կուսկոմխտեյին Կազադայիվի հակահեղափոխական գրույցների մասին, վորը գործադուլի կոչ ե անելիս յեղել բանվորներին: ՆձՎ—Ջաբրատի կուսկազմակերպությունն անկարող ե յեղել

տեսնել և ժամանակին մերկացնել այդ հակահեղափո-
խական դրույցները քաղաքական աստուղը:

ՆՃՎ-ի կուսակցական և տնտեսական ղեկավարու-
թյան զգաստության բթացման հետևանքով հակահե-
ղափոխական տրոցկիստներին հաջողվում է սողակել
նախնականների ճանապարհային վարչության մեջ
Ձաքրատում և արտադրության մի շարք կարևոր ղե-
կավար դերքեր դրավել: Հակահեղափոխական տրոց-
կիստ Կովալյովը ղեկավարելիս է յեղել ՆՃՎ-ի ամբողջ
քարշի վարչության տեխնիկական բաժինը, տրոցկիստ-
տեռորիստ Դեմինն ինստրումենտալ ցեխի սկեսն է յե-
ղել, տրոցկիստ Բուդայենկոն ղեկավարելիս է յեղել
նորմավորման գործը ղեկավարում, հակահեղափոխական
տրոցկիստ յերկերեսանի Դուրնովը յեղել է շահագործ-
ման խոշոր ցեխի կուսկազմակերպիչը:

Դասակարգային թշնամու դեմ մղվող պայքարում
զգաստության բթացման փաստեր կան նաև Թբիլիսիի
կազմակերպչության մեջ:


Հակահեղափոխական գործունեյության համար ներ-
կայումս ձերբակալված տրոցկիստ Ակիրտավան, վորն
աքսորից եր վերադարձել և վերականգնված չեր կու-
սակցության շարքերում, մինչև իր ձերբակալության
մոմենտն ել վայելում եր լիբերալություն անող կոմու-
նիստներից վոմանց բարեկամությունն ու համակրան-
քը: Ղեկավար աշխատողների թվում գտնվեց, մեղմ
արտահայտած, մի տարրորինակ մարդ, վորը վորոշել
եր «համոզել» Ակիրտավային, նրա հայացքների հա-
կահեղափոխական լինելու մասին, նրանով, վոր տալիս
եր նրան կարգալու իր մոտ յեղած հակահեղափոխա-

կան տրոցկիստական գրականությունը, ինչպիսին
տրոցկիստ Ակիրտավան առիթ բաց չթողեց ոգտադուր-
ծելու իր հակահեղափոխական պրոպագանդի համար:

Թբիլիսիում (Թիֆլիս) ձերբակալված տրոցկիստ-
տեռորիստ Վարնազովը մինչև վերջին ժամանակներս
ել վայելում եր ղեկավար աշխատողներից մեկի բարե-
կամությունն ու համակրանքը, վոր հաճախ հյուրընկա-
կերպով ընդունում եր Վարնազովին իր մոտ և չեր
կարողանում նրա մեջ նկատել կուսակցության թշնամի
տեռորիստին ու դիվերսանտին:

Թբիլիսիի (Թիֆլիս) Ստալինյան ռայոնում գտնվող
Սնդրկովկասյան հիդրո-եներգետիկ գիտահետազո-
տական ինստիտուտի դիրեկտոր հակահեղափոխական-
տրոցկիստ, յերկերեսանի Բերձենիշվիլին ինստիտու-
տում հավաքելիս է յեղել հակահեղափոխական աշխա-
տանքի համախոհ «իր մարդկանց» տրոցկիստներ
Ոբոլենսկուն, Զիլաձեյին, Ոսխանովին ու նախկին
ակտիվ մենչևիկ Մարչանիային, վորը խաբեբայության
ճանապարհով սողակել եր կուսակցության մեջ: Հենց
այդ «կոմունիստներն» ել «կաղմում» եյին ինստիտու-
տի կուսակցական կազմակերպչությունը: Բերձենիշվի-
լին իրեն շրջապատել եր անհայտորեն խորթ, արա-
տավորված, անցյալում խորհրդային իշխանության
դեմ մղած իրենց պայքարում «ծառայություններ» ու-
նեցող մարդկանցով: Կուսակցական մարմիններն աչ-
քաթող եյին արել տրոցկիստ Բերձենիշվիլու այդ քա-
յայիչ աշխատանքը:

Այդ բոլոր մերկացված հակահեղափոխական-տրոց-
կիստների քայքայումը և քաղաքական մեթոդն



ե. հանդիսացել ամենատար, ամենազարչելի ու կեդ-
տոտ յերկերեսանիությունը: Հայտարարելով կուսակ-
ցությանը իրենց հաշվատարիմ լինելու մասին, հեղա-
փոխական Ֆրադներ արտասանելով ի պաշտպանու-
թյուն կուսակցության դժի, դրանով հիմարացնելով
զգաստությունից զուրկ ղեկավարներին ու կոմունիստ-
ներին, նրանք գործում եյին վորպես ժողովրդի թշնա-
միներ:

Տրոցկիստներ Ձիսլաձեն, Կանդելակին, Լ. Գաւ-
վիանին և ուրիշները Թբիլիսիի կուսակցական կազմա-
կերպությունների ժողովներում հանուն կուսակցու-
թյան լենինյան դժի իրենց ունեցած յեւույթները ու
ճառերի մեջ հատուկ ակտիվություն եյին յերևան բե-
րում տրոցկիզմի դեմ, իսկ գործնականում միևնույն
ժամանակ ընդհատակյա հակահեղափոխական աշխա-
տանք եյին կատարում:

Հակահեղափոխական-տրոցկիստ Լեոն Սարգիսովը
չորս տարի շարունակ աշխատել է կուսակցության լե-
նինյան ուսկոմում վորպես պրոպագանդիստ և խմբակ
է ղեկավարելիս յեղել Թբիլիսիի (Թիֆլիս) «ՁՅ կոմի-
սարները» անվան գործարանում: Խմբակի պարապ-
մունքներում դասախոսություններ ու զրույցներ անց-
կացնելով ի պաշտպանություն կուսակցության դժի և
դրանով իսկ թմրեցնելով կուսակցական կազմակեր-
պության զգաստությունը, նա անպատիժ կերպով կա-
տարում եր. իր ստոր հակահեղափոխական գործը:

Այս բոլոր փաստերը խոսում են այն մասին, վոր
կուսակցության դժի լիակատար ու վճռական հաղթա-
նակի պայմաններում, յերբ բացահայտ պայքարը կու-
սակցության քաղաքականության դեմ պարզապես ան-
հուսալի յե դարձել, միայն յերկերեսանիությունը կա-
րող է քողարկել և պաշտպանել կուսակցության ներ-
սում հակակուսակցական ու հակահեղափոխական տար-
րերին:

Յերկերեսանին կուսակցությանը խաբող է, յերկե-
րեսանին խորհրդային իշխանության թշնամին է, ժո-
ղովրդի թշնամին: Յերկերեսանին — դա հակահեղա-
փոխության գործակալն է, վնասարար, պրովոկատոր,
հակահեղափոխության հետախույզը:

Այն կոմունիստը, վորը հաշտվողականություն և
նեխված լիբերալիզմ է յերևան բերում յերկերեսանի-
ության նկատմամբ, թեկուզ ինչպիսի ձևերով ել դուսե-
վորվի այն, մեծագույն հանցանք է գործում կուսակ-
ցության հանդեպ, խորհրդային իշխանության հան-
դեպ, մեր հայրենիքի հանդեպ:

Շատ հաճախ կուսակցության ու խորհրդային իշ-
խանության թշնամիներն ազգային հանրապետու-
թյունների պայմաններում քողարկվում են ազգային
կենցաղային առանձնահատկություններով ու արադե-
ցիաներով:

Բնավ պատահական չէ, վոր առանձին տրոցկիստա-
կան-դինովյեվական հակահեղափոխական տարրեր ի-
րենց վնասարար ու տեռորիստական աշխատանքը քո-

դարձելու համար Անդրկովկասի հանրապետութիւններին աշխատաւոր ժողովուրդներին «ազգային ինքնին» արտահայտողների դիմակ են հագնում:

Պատահական չէ, վոր Ստեփանյանի տրոցկիստական խումբը Յերևանում իր լկտի հակահեղափոխական տրամադրութիւնները թանձրորեն ծծեցնում եր նացիոնալիստական դարձահոտութիւնը:

Նացիոնալիստական տարրերը շատ հաճախ նացիոնալ-շովինիստական շողակրատութիւնից զլորվում են խորհրդային իշխանութիւն դեմ կռիւում դիրքերը և բլոկի յեն դիմում հակահեղափոխական տրոցկիստական-զինովյեական, մենչևիկյան, դաշնակցական ու մուսավաթական տարրերի հետ: Այսպես է բռնչելիների կուսակցութեան դեմ, խորհրդային իշխանութիւն դեմ մղվող պայքարի տրամաբանութիւնը:

Անդրկովկասի հանրապետութիւնների կուսակցական կազմակերպութիւնները լայլ են հիշում իրենց աշխատանքի այդ առանձնահատկութիւնների մասին:

Նրանք անողոր արտքար են մղում հակահեղափոխական, նացիոնալիստական տարրերի և նացիոնալ-ուկրոնիզմի ռեցիդիւիների դեմ իրենց սեփական շարքերում:

Նրանք շատ լայլ գիտեն, թե ինչով վերջացավ նացիոնալ-ուկրոնիզմի դավաճանական ուղիւն:

Նացիոնալ-ուկրոնիստները վրացական մենչևիկիների, ադնվականների, կալվածատերերի և կուլակների արտահայտիչներն ու գործի շարունակողները հանդիսանալով, իրենց զգալի մասով հետադայում սահեցին հակահեղափոխական տրոցկիզմի ճահիճը և կուսակ-

ցութիւն ու խորհրդային իշխանութիւն դեմ մղվող պայքարում տրոցկիստների ու զինովյեականների հետ միասին կանգնեցին լրտեսութեան, դիվերսիայի և տեռորի ուղու վրա:

Անդրֆեդերացիայի լիկվիդացիայի կապակցութիւնը Անդրկովկասում նացիոնալիստական տարրերը փորձում են աշխուժացնել իրենց աշխատանքը:

Գտնվում են մարդիկ, վորոնք կուսակցութիւն և կառավարութիւն վորոշումը՝ Վրաստանի, Աբրեջանի և Հայաստանի՝ անմիջականորեն խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան մեջ մտնելու և այդ առնչութիւնը Անդրկովկասյան Ֆեդերացիայի լիկվիդացիայի մասին փորձում են զնահատել վորպես իրենց անցյալ նացիոնալ-ուկրոնիստական սխալների արդարացում: Այդ մարդիկ, ինչպես յերևում է, չեն հաւակցել իրենց անցյալ սխալները, չեն հասկանում այն, ինչ կուսակցութիւնը կատարում է այսօր, և պետք է անողորաբար մերկացվեն:

Ընկեր Ստալինը Համկ(բ)կ կենտկոմի պլենումում «Նոր Սահմանադրութիւն նախագծի մասին» իր դեկլացման մեջ այդ մարդկանց համեմատում եր 1917 թվականի ապրիլին Պետրոգրադում յեղած մի բռնչելիկյան խմբի հետ, վորին Լենինն ավանտյուրիստական եր անվանում, վորովհետև այդ խումբը պահանջում եր խորհրդային իշխանութիւն հաստատել 1917 թվի ապրիլին, յերբ դրա համար պայմանները դեռ չէին հասունացել և վաղաժամ շտապողականութիւնը կարող եր կատարտրոֆով վերջանալ կուսակցութիւն համար: Թիկ յերբ 1917 թվականի Հոկտեմբերին կուսակցու-

Թյունը վերցրեց իշխանությունը և խորհրդային կարգեր հաստատեց, այդ խմբի մարդիկ հաղթական տեսքով ասում եյին, վոր նրանք իրավացի եյին, յերբ դեռ 1917 թվականի ապրիլին պահանջում եյին խորհրդային իշխանություն հաստատել: Լենինն այդ կոմունիստներին անվանում եր փոքրիկ մարդկոյրներ: Այսոր այդ մարդկոյրներին են նմանվում այն նացիոնալ-ուկլոնիստները, վորոնք փորձում են Անդրկովկասյան Ծեղերացիայի վերացման մասին կուսակցութեան և կառավարութեան վորոշմամբ արդարացնել իրենց նախկին սխալները:

Նացիոնալ-ուկլոնիստները մեր կուսակցութեանը միասել են այն ժամանակ, յերբ հարկավոր եր Անդր-կովկասում ջախջախել բուրժուական նացիոնալիստներին և ամրապնդել ժողովուրդների բարեկամութեան կապերը: Նրանք փորձում են մեզ միասել նաև այսօր, աշխատելով խարխլել անդրկովկասյան ժողովուրդներին ոտաբխյան բարեկամությունը:

Վրացական և հայկական ինտելիգենցիայի հին կադրերի վորոշ մասի մեջ դեռևս ուժեղ են նացիոնալիստական տրամադրությունները: Թշնամին շատ հաճախ փորձում ե ոգտադործել այդ: Առանձին կոմունիստներ, իսկ յերբեմն ել նաև ղեկավար աշխատողներ, փոխանակ համառորեն աշխատելու ինտելիգենցիայի այդ խմբերի ինտերնացիոնալ դաստիարակութեան վրա, իրենք հաճախ շատ քիչ խորամուխ լինելով կուսակցութեան ազգային քաղաքականութեան հարցերում, ձայնակցում են հետամնաց նացիոնալիստական տրամադրություններին, չփոթեցնում են իրենց և ու-

րիշներին, իսկ յերբեմն ել նացիոնալիստական միասակար տրամադրությունները փոխադրում են կուսակցական կազմակերպությունների շարքերը: Կոմունիստը պետք ե ազդի շրջապատի վրա, նրանց իր հետևից տանի, իսկ մի շարք կոմունիստների մոտ հակառակն ե կատարվում, — նրանց վրա ազդում են նացիոնալիստական և թշնամական տարրերը, ոգտադործելով նրանց իրենց նպատակների համար:

Անդրկովկասում կուսակցական կազմակերպությունները հսկայական աշխատանք են կատարել ազգային ինտելիգենցիայի կադրերը խորհրդային իշխանութեան և կուսակցութեան շուրջը համախմբելու դործում: Դրանում նրանք անվիճելի և մեծ հաջողություններ ունեն:

Մեր խնդիրն ե՝ ե՛լ ավելի բարձրացնել դաստիարակությունը կուսակցութեան ազգային քաղաքականութեան իրականացման դործում, ե՛լ ավելի լավ կազմակերպել մասսաների ինտերնացիոնալ դաստիարակութեան աշխատանքը և այդ ասպարեզում ևս վերջնականապես ջախջախել թշնամուն:

VI

Անդրկովկասում դեռևս կան հին մնացուկներ և այսպես կոչված «տրադիցիաներ», վորոնց հարկավոր եր վաղուց վերջ դնել:

Դեռ քիչ չեն այնպիսի կոմունիստներ, վորոնք կենցաղային տրադիցիոն հարաբերությունները բարձր են

դասում կուսակցական սկզբունքային հարաբերու-
թյուններին :

Հյուսիսային թղթի տրադիցիաներում կա-
րելի չե արդարացնել այն առանձին կուսակցականների
վարմունքը, վորոնք թրիլիսում (Թիֆլիս) «Ուրիանտ»
հյուսանոցում հատուկ հանդիսավոր դիմավորում —
բանկետ են կազմակերպել դավաճան Լոմինաձեյին,
վորը, ինչպես հաստատված է, տրոցկիստական-դի-
նովյեվական հակահեղափոխական ընդհատակի կազ-
մակերպիչներին մեկն եր հանդիսանում և վորի հա-
կախական կուսակցական հայացքներն ու աշխատանքը դեռ այն
ժամանակ լավ հայտնի էին դիմավորման առանձին
նախաձեռնողներին :

Դեռ կան մարդիկ, վորոնք չեն ցանկանում փչաց-
նել իրենց լավ կապերը «բարեկամների» հետ, ըստ յե-
րևութին աչքի առաջ ունենալով, վոր այդ «բարեկամ-
ներն» իրենց կարող են յերբեկցես պետք դալ :

Այդ փաստերը ցույց են տալիս, թե ինչպես առան-
ձին կոմունիստներ, չհասկանալով հեղափոխական
զգաստությունը բարձրացնելու խնդիրները, հանդես են
բերում անթույլատրելի բարեհոգություն, նեխած լի-
թերալիզմ, դրամով իսկ իրենց սանձը հակահեղափո-
խական տարրերի ձեռքը տալով :

Այս բոլոր փաստերը կրկին ու կրկին անգամ հաս-
տատում են հեղափոխական զգաստությունը բարձրաց-
նելու անհրաժեշտության մասին, սոցիալիզմի թշնա-
միներին և նրանց դիմավոր ջոկատի — դարձելի հակա-
հեղափոխականների, տրոցկիստների, դինովյեվական-
ների — դեմ անողոք պայքար մղելու անհրաժեշտու-

թյան մասին ընկեր Ստալինի ցուցումների հանձարե-
ղությունը :

Հեղափոխական հարձակողական բոլշևիկյան զգաս-
տությունը պետք է իր արտահայտությունը գտնի վո՛չ
թե զգաստության մասին արտասանված պատահական
ճառերում, վո՛չ թե ամպագոռգոռ բանաձևերում,
այլ կոմունիստի յուրաքանչյուր գործողության մեջ
այն աշխատամասում, վորտեղ նա դրված է կու-
սակցության կողմից, այն իրադրության մեջ, վորտեղ
նա գտնվում է, կոմունիստի գործնական աշխատան-
քի յուրաքանչյուր քայլափոխում և ամենորյա կյան-
քում ու կենցաղում :

Հեղափոխական զգաստությունը պետք է կայանա
այն մարդկանց ուշադիր ստուգման մեջ, վորոնց հետ
աշխատում է կոմունիստը, վորոնք չընկալատում են
նրան և վորոնց հետ նա չփվում է :

Զգաստությունը պետք է արտահայտվի բոլշևիկյան
ինքնաքննադատության ծավալման մեջ, ինքնաքննա-
դատություն, վորն ոգնում է մերկացնելու մեր թերու-
թյունները և թշնամիների մեքենայությունները :

Զգաստությունը պետք է կայանա այն բանում, վոր
կոմունիստը լինի աշխուրջ և իր կուսակցական աչքով
աշխատի ներթափանցել բոլոր անկյուններն ու ճեղ-
քերը, հետաքրքրվի ամեն բանով :

Զգաստությունը պետք է արտահայտվի յուրաքան-
չյուր կոմունիստի, յուրաքանչյուր կոմյերիտականի,
յուրաքանչյուր վոչ-կուսակցական բոլշևիկի աշխա-
տանքը բարելավելու մեջ, աշխատանք, վորի նպատա-

վրն ե իրազործել կուսակցության խնդիրները և ընկեր Ստալինի ցուցումները:

Կուսակցական փաստաթղթերի ստուգումն ու փոխանակումն ոժանդակեցին կուսակցական կազմակերպությունների զգաստության բարձրացմանը: Սակայն չպետք է կարծել, թե կուսակցական փաստաթղթերի ստուգումն ու փոխանակումը կուսակցությունը վերջնականապես մաքրեցին թշնամիներից: Ձի կարելի կարծել, թե մերկացնելով մի շարք հակահեղափոխական տրոցկիստական-գինովյեվական խմբեր, մենք արդեն մերկացրել և մեկուսացրել ենք այդ բոլոր խաբեբաներին և սրիկաներին: Դեռ կուսակցության մեջ մնացել են գաղտնագործ, քողարկված վոխերիմ թշնամիներ. դեռ վոչ բոլոր յերկերեսանիներն են մերկացված: Հարկավոր է դեռ լավ աշխատել՝ տրոցկիստական-գինովյեվական դարչահոտ ընդհատակից լույս աշխարհ հանելու համար կուսակցության և խորհրդային իշխանության գաղտնագործ թշնամիներին:

Յուրաքանչյուր կուսակցական կազմակերպություն պետք է արթուն կերպով պահպանի իր շարքերի մաքրությունը, վորովհետև այնտեղ, վորտեղ մինչև վերջը կուսակցությունից չեն, մաքրված յերկերեսանիները, ալլատելվածները, թափթփվածները, կարյերիստները, մորթապաշտները, քայքայվածները և մյուսները, այնտեղ հակահեղափոխական-լրտես-դիվերսանտ-տրոցկիստ-գինովյեվականը հող ունի իր աշխատանքի համար, իրեն բարեկամներ է գտնում, կադրեր է կալմակերպում իր հակահեղափոխական-տեոորիստական աշխատանքի համար:

Միայն բոլշևիկյան կուսակցության շարքերի միասնության ու մաքրության համար մղվող անդուլ ու յերկարատև պայքարը կապահովի սոցիալիզմի թշնամիները վերջնական վոջնացումը:

*
**

Սոցիալիզմի միջազգային և ներքին թշնամիները մի անգամ չե, վոր իրենց հակահեղափոխական վոտնձգությունների համար վործել են հույս դնել Անդրկովկասի վրա:

Անդրկովկասը մի շարք առանձնահատկություններ ունի, վորոնք նրան տարբերում են խորհրդային Միության շատ յերկրամասերից ու հանրապետություններից:

Անցյալում Անդրկովկասում ուժեղ են յեղել մենչեվիկների, դաշնակների և մուսավաթականների հակախորհրդային կուսակցությունները. խորհրդային իշխանության առաջին տարիներին Անդրկովկասյան հանրապետություններում ուժեղ եր նացիոնալիզմը, նացիոնալ-ուկրոնիստական խմբավորումները կուսակցական կազմակերպությունների ներսում:

Այդ առանձնահատկությունները կայանում են նմանապես տնտեսական և ազգային բարդ հյուսվածքում, վորը լրացուցիչ դժվարություններ է ստեղծել սոցիալիստական շինարարության համար:

Թշնամին հաճախակի աշխատել է ոգտագործել Անդրկովկասի բոլշևիկների աշխատանքի այդ առանձնահատկություններն ու դժվարությունները՝ կուսակցու-

Թյան և խորհրդային իշխանության դեմ պայքարելու համար: Տրոցկիստները և զինովյեվականները կուսակցության դեմ մղած իրենց պայքարի ամբողջ ընթացքում, դավաճանությունների և մատնությունների իրենց ամբողջ ստոր ճանապարհին փորձել են իրենց համար հենարան գտնել Անդրկովկասի առանձին կետերում:

Ձուր չե, վոր Լոմինաձեն, Տեր-Վահանյանը, Վարդինը և մյուսները «պտույտներ» եյին գործում Սև ծովի ափին և Անդրկովկասի ու Վրաստանի քաղաքներում, աշխատելով կապեր հաստատել և մարդիկ հավաքողքել հակահեղափոխական աշխատանքի համար:

Անդրկովկասի բոլշևիկները հիանալի կերպով դիտեն իրենց աշխատանքի առանձնատկություններն ու դժվարությունները:

Անդրկովկասի և Վրաստանի բոլշևիկները, մեծ առաջնորդ ընկեր Ստալինի կողմից դաստիարակված, նրա հանձարեղ առաջնորդությամբ ջախջախել են հակախորհրդային կուսակցությունների — մենչևիկների, դաշնականների և մուսավաթականների ուժերը, ջախջախել են նացիոնալ-ոսկյոնիզմը, անխորտակելի խաղաղություն են ստեղծել Անդրկովկասի ժողովուրդների միջև և վիթխարի հաջողությունների յեն հասել սոցիալիզմի շինարարության գործում:

Ամբողջ կուսակցության հետ միասին նրանք ջախջախել են իրենց սեփական չարքերում յեղած ամեն տեսակի ոպոդիցիաներն ու խմբավորումները: Ամբողջ կուսակցության հետ միասին նրանք ջախջախել են հա-

5
կահեղափոխական տրոցկիստներին և զինովյեվականներին:

Յեվ այսոր, յերբ տրոցկիստական-զինովյեվական հակահեղափոխության դարչելի Թափթփուկներն աշխատում են նոր հարձակումներ գործել սոցիալիզմի յերկրի դեմ, Անդրկովկասի բոլշևիկները, բարձրացնելով բոլշևիկյան զգաստությունը, ամրապես կանգնած են Լենինի-Ստալինի կուսակցության գործի պաշտպանության դիրքերում:

Նրանք անողոքաբար մերկացնում և իրենց չարքերից վռնդում են բոլոր նրանց, ովքեր թուլացնում են զգաստությունը և գործակցում են թշնամուն:

Ամբողջ կուսակցության հետ միասին նրանք պայքարում են այն բանի համար, վորպեսզի հողի յերեսից սրբեն և վերջնականապես ու ընդմիշտ վճռչացնեն սոցիալիզմի թշնամիներին:

VII

Սոցիալիզմի նկատմամբ, Լենինի-Ստալինի կուսակցության նկատմամբ, կուսակցության և ԽՍՀՄ-ի կառավարության ղեկավարների նկատմամբ տաժած իրենց դադանային ատելության մեջ, դիտակցելով իրենց անգորությունը և վողորմելիությունը, թշնամիները կաբյրերիստների, մորթապաշտների և մարդոտների ստոր վողով բռնել են տեռորի ուղին՝ ընդդեմ սոցիալիզմի գործի մարտիկների:

Այդ նրանք—տրոցկիստներն ու զինովյեվականներն են, վոր կաղմակերպում են դյուշի առաջավոր կոլ-

անտեսութիւնները ստախանովականները և առանձին ղեկավարների ստոր սպանութիւնները մութ անկյուններին :

Այդ նրանք են թույն խառնում առանձին բանվորական ճաշարանների կերակուրների մեջ, վորպեսզի թունավորեն զործարանների լավագույն ստախանովականներին :

Այդ նրանք են լրտեսական և դիվերսիոն խմբեր կազմակերպում, վորպեսզի ողնեն Ֆաշիստներին ու իմպերիալիստներին խորհրդային իշխանութեան դեմ մղվող պայքարում :

Այդ նրանք են տեռորիստական խմբեր կազմակերպում կուսակցութեան և կառավարութեան ղեկավարների դեմ մահափորձեր նախապատրաստելու համար :

Սակայն նրանք չարաչար սխալվում են իրենց հաշիվներում :

Նրանք իրենց հոգևարքային ջղաճգումների մեջ այդ սպանալիքներով վռչ վռքի չեն վախեցնի, վռչ վռքի չեն տատանի :

Մեր յերկրի բոլշևիկներն ու աշխատավորները բարձրացնելով ստալինյան զգաստութիւնը, կվռչնչացնեն թշնամուն :

Ընկեր Ստալինն ասում էր, վոր թշնամիները

«... յենթադրում էին վախեցնել մեզ և հարկադրել մեզ չեզվելու լենինյան ուղուց : Այդ մարդիկ յերևի մոռացել են, վոր մենք, բոլշևիկներս, առանձին կերտվածքի մարդիկ ենք : Նրանք մոռացել են, վոր բոլշևիկներին չես վախեցնի վո՛չ դժմարութիւններով, վո՛չ սպանալիքներով :


Ըով : Նրանք մոռացել են, վոր մեզ կոխել և մեծ լենինը, մեր առաջնորդը, մեր ուսուցիչը, մեր հայրը, վոր վախ ասած բանը չգիտեր և այն չեք ընդունում պայքարի մեջ : Նրանք մոռացել են, թե վորքան ավելի ուժեղ պաղպղեն թշնամիները, և վորքան ավելի շատ հիատերիկայի մեջ ընկնեն կուսակցութեան ներսում յեղած հակառակորդները, այնքան ավելի յեն շիկանում բոլշևիկները նոր պայքարի համար և այնքան ավելի սրընթաց են շարժվում դեպի առաջ» :

Բոլշևիկյան կուսակցութեան և խորհրդային իշխանութեան քշնամիները մոռացել են, վոր մեր կուսակցութեան և յերկրի դեկավարում են ստալինյան կենտրոնական կոմիտեն և հանճարեղ մեծ առաջնորդ Ստալինը — մեր ուսուցիչը, մեր հայրը, վորը վախ ասած բանը չի ընդունում պայքարում, մեզ տանում է միայն դեպի առաջ, վորը բոլշևիկյան զգաստութեան որինակներ է տալիս, պրոլետարական հեղափոխութեանից դեն մղելով քշնամիների հարվածները, վորպես ժամապահ կանգնած մեր կուսակցութեան և մեր յերկրի հզորութեան պաշտպանութեան համար :

Անդրկովկասի բոլշևիկներն ամբողջ կուսակցութեան հետ միասին ել ավելի կբարձրացնեն հարձակողական զգաստութիւնը և կուժեղացնեն անողոք պայքարը յերկրեհասնիների, ստոր դավաճանների ու մատնիչների, հակահեղափոխական տրոցկիստներ-դի-նովյեվականների և նրանց զործակիցների դեմ, կիռ-չիացնեն, հողմացրիվ կանեն սոցիալիզմի թշնամիներին :

Անդրկովկասի բոլշևիկները յուրաքանչյուր կոմունիստի և կոմյերիտականի մեջ, յուրաքանչյուր աշխատավորի մեջ անդուլ կերպով խորին ատելություն կզատախարակեն թշնամու նկատմամբ, մասսաների ցատումը բարձրացնելով ջախջախված չահադործող դատակարգերի և նրանց դործակալության մնացորդների հակահեղափոխական վտանձությունների դեմ:

Անդրկովկասի բոլշևիկները հետադաշում ել Անդրկովկասյան հանրապետությունների աշխատավորների սրտերում անդուլ կերպով սիրո և նվիրվածության ջերմ զգացմունք կզատախարակեն իրենց ծաղկող հայրենիքի նկատմամբ, բոլշևիկյան կուսակցության և ԽՍՀՄ-ի կառավարության նկատմամբ, ժողովուրդների առաջնորդ հարազատ մեծ Ստալինի նկատմամբ, վորի իմաստուն ղեկավարությամբ ԽՍՀՄ-ում ձեռք են բերված մարդկային սլատմության մեջ չտեսնված սոցիալիզմի հաղթանակները, վորի ղեկավարությամբ ամբողջ աշխարհի աշխատավորները կապիտալիզմի դեմ մղվող վճռական գոտեմարտերում մեծ հաղթանակներ ձեռք կբերեն:



602

ԳԻՆԸ 30 Կ.



Л. БЕРИЯ
РАЗВЕЯТЬ ВПРАХ ВРАГОВ
СОЦИАЛИЗМА

Армпартиздат, Ереван